


Վ.ԿՈՐՈՆԵՆԿԱ

# ԳԱՎԱԾ ՏՂԱՆ



891.715  
4-78

«ԲՈԼԵՔԵՎԻԿ» ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՌԱՍՏՈՎ, ԴԱՆ — 1938

-6 NOV 2011

ՀՅԱՂԻՄ  
Կ-28

Այ

Վ. ԿՈՐՈԼԵՆԿՈ

# ԳՆՎԱԾ ՏՂԱՆ

Թարգմ. Հ. ԲՈՎ. ԴԱՆՅԱՆ

ՀՅԱՂԻՄ  
ՀՅ-03-18

ՀՅ-03-12

ԽՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ «ՔՈՒԼՏԵՎԻԿ» ՀՐԱՏԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍԻԱ-ԴՊՆ--1938



Այն տունը, վորտեղ մենք ապրում եյինք, գտնը-  
վում եր մի նեղիկ փողոցում, վորը տանում եր մո-  
տակա փոքրիկ հրապարակը։ Այդ հրապարակում իբրա  
եյին հանդիպում միքանի փողոց, վորոնցից յերկուսը  
գերեզմանատուն ելին տանում։

Այդ փողոցներից մեկը կոչվում եր «Շոսսե» (խը-  
ճուղի). փոստի յերկուծ, զանգուլակավոր կառքերը  
վազեվագ անցնում եյին այդ փողոցով և, վորովհետե  
քաղաքի բանուկ մասը վերջանում եր իսկեմիսի այս-  
տեղ, փոստատարները յերբեմն կանգնեցնում եյին  
ձիերն ու արձակում կապոտած զանգուլակները. այս-  
տեղից արդեն փոստի կառքը շարունակում եր իր  
ճանապարհ՝ հնչեցնելով զանգուլակները, վորոնց  
ձայնը հետզհետե նվազում եր և հեռանալով մարում,  
մինչև վոր կառքն ել փոքրանում, կետի չափ եր  
դառնում։

Յես և յեղայրս մեր փողոցի անկյունից կամ  
տան պարսպի զլիսից հաճախակի դիտում եյինք, թե  
ինչպես են անհետանում հեռվում փոստի կառքերը,  
հրեական բարձր քբալագուները», անձոնի դիմի-  
ջանսները, գյուղացիների սայլերը։

Այդ փողոցը վորքան վոր հեռանում եր, այնքան  
զառիվեր եր զնում և այդ եր պատճառը, վոր հեռ-  
վից գեպի քաղաքի կենտրոնը յեկողները կարծես գա-  
րիգայր եյին զլորվում։ Ու յես գեռ այժմ ել հիշում  
եմ, թե ինչպես ապշած եյի մասել մանուկ հասա-

БІБЛІОТЕКА  
Академії Наук  
УРСР

ВО 50785

5159-53

Редактор П. Чатыньян  
Техред. Л. Жданович Корректор М. Кеворкьян

Издание № 6/32. Сдано в набор 31 января 1938 г., под-  
писано в печать 31 марта 1938 г. Формат 82x108 32  
Объем 1 печ. л. Тираж 2.600. Упомянутит № И-760

Типография Ростовского областного армянского изда-  
тельства „Большевик“ (Ростов на-Дону, Ворошилов-  
ский пр. 27). Заказ № 221.

կումս, յերբ տեսա, վոր հորիզոնի հետևից յերեացող քառակուսի մի փոքրիկ բիծ սկսեց աստիճանաբար մեծանալ ու մոտենալ և, շատ ժամանակ չանցած, ամբողջ փողոցը բռնեցին գորասյուները, լցնելով այն հազարավոր փոտքերի դոփյունով ու որկեստրի ականջ խլացնող նվազով: Զինվորները հագած եյին կլոր գլուխարկներ՝ առանց հովարի, ու կարճիկ մաշոտած կաֆտաններ: Սպաները գլխներին դրած եյին կոշտ կիվերներ, վերևից ծածանվող սուլթաններով կամ մետաղե կոներով, Նրանք բոլորն ել զնում եյին փոտք փոտքի, համաշափ քայլերով: և այս համաշափ շարժողության մեջ կարծես մի դաժան բան եր թաղնված:

Ամենքն ասում եյին, վոր դրանք «Սևաստոպոլի» պատերազմից են վերադառնում:

Այդ խճուղիով կալանավորներ ել եյին անցնում, գնդղնդացնելով իրենց շղթաները. իսկ մի անգամ ել տարան մի տիրամած մարդ՝ «առևսարա կան մահապատիժ»\* տալու համար: Առջևից գնում եր զինվորների դասակը. չորս թմբկահար ուժգնորեն տուացնում եյին թմբուկները մանը գարկերով: Թմբկահարների ամեն մի քայլափոխին, նրանց ձախ փոտքի հետ, վեր ելին բարձրանում թմբուկները, բայց զարկը շարունակվում եր անդադրում, նույնպես համաշափ ու չարագուշակ: Նրանց հետեւից գնում եր սայլակը, վորի վրա սարքված բարձր նստարանին նստած եր մի մարդ՝ ձեռները դեպի հետ՝ նստարանին կապած: Նրա բաց գլուխը խիստ կախ եր ընկել և այս ու այն կողմն եր շարժվում, յերբ դարուփոս սայլահատակի վրա սայլակը ցնցվում եր. Նրա կըծքին կախված եր թեք ընկած մի տախտակ՝ սպիտակ տառերով գրված մակագրությամբ: Յեվ այս տխուր պատկերը լողում եր ամբոխի գլխներից վեր, կարծես իշխելիս լիներ

\* Ցարական Ռուսաստանի որենքներով «առևսարական մահապատիժ» եր կոչվում այն պատիժը, վորին յենթարկվում եր հանցագործը. պատիժը կատարվում եր մարակի հարգածներով՝ առետրական մարդաշտ հրապարակներում, այլևայլ հանցանքների համար:

մարդկային այդ մոլեգին հորձանքին: Սայլի հետեւից գնում եր զինվորների մի դասակ. վազում եր նաև ամբոխի մի հոծ բազմություն: Մեզ, ի հարկե, թույլ չտվին, վոր հրապարակը դուրս գանք: Բայց սպասավոր Գանդըլոն, վորն ամբոխի հետեւից վագել գնացել եր այստեղ, հետո արդեն խոհանոցում պատմում եր մեզ մեծ հափշտակությամբ, թե ինչպես դահիճը պառկեցրել ե «մարդասպանին» կառավինատեղում հանցապարտների նստարանին, ինչպես նա սարքել ե մտրակը՝ իբր թե ասելով.

— Հերդ ու մերդ քեզ չեն խրատել՝ դե ուրեմն յես կիրատեմ:

Հետո բարձր գոռացել ե՝ «դիմացիր հա, հրես գաղելու յեմ». ապա հրապարակովը մեկ լսվել ե մըտրակի շաշյունը և պատժապարտի վոչ մարդկային ճիշը: Մեր տան սպասուհիները նույնպես քացականչում ու յերեսներին խաչ եյին հանում:

Առհասարակ յերկար և ուղիղ ձգված այդ խճուղիով դեպի քաղաքը ու քաղաքից դուրս եյին շարժվում շատ և շատ հետաքրքրական, նոր և յերբեմն ել սարսափելի բաներ:

Մեր բակը մի հարմարավոր և հանդարտիկ տեղ եր: Մեծ փողոցներից նա անջատված եր յերելու քարշեն աներով, վորոնք անդական լեզվով «կամենիցա» եյին կոչվում: Այդ քարե աներից մեկում ապրում եյին մեր տանտերերը: Նրանց բնակարանն ու կահագորությունը շատ ճոխ և հարուստ եյին թվում իմ աչքին: Տան դարպասը նայում եր դեպի նրբափողոցը. դարպասի գլխին շատ ցածր իր խիտ ճյուղերն եր փոել հին սպիտակատերես կաղամախը: Տանտիրոջ կառապանը, վորն իր մոխրագույն լիվրեյով շատ պատկառելի յեր թվում, ամեն անգամ կառքը դարպասից ներս ու դուրս քշելիս, պետք ե գլուխը վար ծոեր, վորպեսզի ծառի ճյուղերը նրա գլխից չթացնեյին պողումենտի յերիզներով ու բանտով զարդարված բարձր գլխարկը:

Մեր անակը բակի խորքումն եր գտնվում. նա մեկ

կողմից կպած եր քարաշեն տանը, իսկ մյուս կողմից  
ծառաշատ պարտեզին:

Մեր բակում կյանքն անցնում եր խաղաղ, մի-  
անգամ ընդուիշա սահմանված կարգով։ Յես մեծ յեղ-  
բորից յերկու և կես տարով փոքր եյի, իսկ փոքր  
յեղբորից մեկ տարով մեծ։ Դրա համար ել, ընա-  
կանաբար, յես ու փոքր յեղբայրս շատ մոտ ելինք  
իրար։ Առավոտները շատ վաղ ելինք վեր կենում,  
յերբ յերկու տունն ել դեռ խորը քնիմեջ եր լինում։  
Միայն ծիապաններն եյին, վոր ախոռում մաքրում  
եյին ձիերին և տանում ջրելու Յերբեմն նրանք ձիերի  
սանձը սեր ձեռքն եյին տալիս։ Նրանց այս վստահու-  
թյունը շատ եր բարձրացնում մեզ մեր աչքում։

Չիապաններից հետո զարթնում եյին խոհարա-  
րուհիները, նրանք գնում եյին փայտատները՝ վա-  
ռելափայտ բերելու։

Ժամը 8½-ին լծված պատրաստ եր լինում հոր ս  
բրիչկան\*, վորով նա պաշտոնի յեր գնում։ Այսպես  
կրկնվում եր ամեն որ, և մեզ թվում եր, վոր դա  
բնության որենքն ե...

Ուեն առավոտ, վորոշյալ ժամին, տանտիրոջ քա-  
րաշեն տան — կամենիցալի — ներքնահարկի անկյունի  
սենյակում միշտ տեղի յեր ունենում միենույն յերե-  
վույթը։ Ամենից առաջ պատուհանի փեղկի յերկաթե  
սողնակն եր ցնցվում, և մեկը ներսից դեպի դուրս  
եր հրում բռութը, վորով գիշերները փեղկերն եյին  
կողպվում։ Յերկաթե այս ձողիկը, ասես կենդանի մի  
քան, ներսից դուրս եր մղվում, ապա աղմուկով կախ-  
վում եր ցած. այսուհետեւ մի անծանոթ ձեռք ողանց-  
քի միջով վերջնականապես յերկու կողմ եր հրում  
փեղկերը։ Դրանից հետո բացվում եր գետնին հա-  
գասար մակարդակի վրա գտնվող պատուհանը, վորի  
մեջ յերենում եր մի մարդ՝ գիշերվա թասակը գլխին

Դա նույն սենյակում ապրող պան Ուլյանիցին  
եր, տարիքն առած ամուրի մի մարդ։ Նա պատու-

հանից դուրս եր հանում փոքրիկ մորուքով և կուգիկ  
քթով իր սուր պրոֆիլը և անհանգիստ աչքերով մտիկ  
եր տալիս մեր ֆլիշելի պատուհաններին։ Շատ ան-  
գամ այնպես եր պատահում, վոր մեր պատուհան-  
ները դեռ վակ եյին լինում։ Այդ բանում համոզվե-  
լուց հետո, պան Ուլյանիցիկն նորից աներեվութա-  
նում եր իր սենյակում, ու քիչ հետո պատուհանի  
գոգում յերենում եր նրա փոքրիկ չոր կերպարանքը՝  
գիշերվա թասակը գլխին ու խայտաճամուկ գիշերա-  
զգեստը հագին, վորի տակից յերենում եյին ձերմակե-  
ղենը և բորիկ վոտներին հագած հողաթափները։

Մենք գիտեյինք, վոր նրա անհանգիստ հայացքը  
պիսավորապես վերաբերում եր մեր տանը. նա չեր ու-  
զում, վոր մորաքույրերից մեկը, վորին յերբեմն կոս-  
տյոլ (յեկեղեցի) եր ուղեկցում, առավոտյան շորերով  
տեսնի նրան. ձիշտե, առավոտյան այդ ժամերին Ուլյա-  
նիցին շատ անդուրեկան տեսք եր ունենում գիշերա-  
զգեստը կեղտոտված ու պատուած, հողաթափները  
մաշված, ձերմակեղենը կեղտոտ ու բեխերը խճճված։

Նորից աներենութանալով իր սենյակում, պան Ուլ-  
յանիցին սկսում եր կարգի բերել իրեն։ Դա մի յեր-  
կարատես ու բարդ արարողություն եր, հատկապես  
սամրկելու գործողությունը, վոր պարզապես սրբա-  
գործության նման մի քան եր, Մեզ իրավունք եր  
տրված այդ արարողության ժամանակ կանգնել դուրսը,  
բաց պատուհանի առջե. այդ միջոցին մեր հետեւում  
յերբեմն յերենում եր նաև քրոջս դեմքը։ Պան Ուլյա-  
նիցին դրա դեմ վոչինչ չուներ, միայն թե, սամբո-  
վելն սկսելուց առաջ, նախազգուշացնում եր մեզ, վոր  
հանդարտ կենանք, վորովհետեւ այդ հանդիսավոր պա-  
հին կարգապահության ամենաաննշան խախտումն ան-  
գամ վտանգ ե սպառնում նրա կյանքին։

Մենք սրբությամբ կատարում եյինք այդ պայ-  
մանը և կրիտիկական բոպեյին, յերբ պան Ուլյանից-  
կին բռնում եր քթի ծայրից և, լեզվով իր թուշն  
ուոցներով, ածելին զգուշաբար շարժում եր բեխերի  
ժոտ կամ թե կոկորդի վրայի մազերն եր սամբում,

\* Բրիչկա—թեթե, կիսով չափ բաց կառք.

մենք նույնիսկ շունչ ել չեցինք առնում, մինչև վոր նա վերջին անգամը չսրբը ածելին և չհավաքեր սափրվելու մյուս պարագաները։ Դրանից հետո նա լվացվում եր, յերեսսրբիչով յերկար ու ձիգ մոլեգնորեն տրորում, շփում եր վիզն ու այտերը, յերեսին բուղը յիշ ցանում, մազերին ֆիքսատուար<sup>\*</sup> քսում, ձգում եր բեխերի ծայրերը և ապա վարագույրի հետևն աներեփութանում։ Բառորդ ժամից նորից եր յերեսում բոլորովին անձանաչելի, յեղեսանու գույնի կարճլիկ վարտիքով, լայքած տուֆլիներով, բաց գույնի ժիլետով, փեշերը կլորածե կտրած մուգկապտագույն սերթուկով։ Այնպես եր թվում, վոր կարծես նրա դեմքն ել զուքիվ, զարդարվել եր. կնճիռներն ու ճմլվածությունը չեր նշմարվում։ Ու ամեն անգամ, յերբ այսպես նորոգված յերեսում եր նա մեր առաջ, մենք չափազանց հարգանքով եյինք համակվում դեպի նա, և այս բանը նրան դուր եր գալիս։ Յերբեմն պատահում եր, վոր սերթուկի բոլոր կոճակները կոճկելուց հետո, նա ինքնագոր կերպով նայում եր մեզ ու ասում.

— Հ՞ը, ինչպես եւ։

Այդ ժամանակ մեր հարաբերությունը պան Ուլյանիցկու հետ խիստ լավ եր։ Այծի փոքրիկ մորուքով, բարակ վոտքերին հագած կարծ ու նեղ վարտիքով նա մեր աշքին ծիծաղելի յեր թվում։ Բայց զրանք անմեղ բաներ եյին. իսկ նրա ամենորյա վերանորոգման գործողությունն առաջացնում եր մեր մեջ վոչ միայն բնական հետաքրքրություն, այլև վորոշ չափով հարգալից զարմանք։

Սակայն, ժամանակ անցնելուց, մեր հարաբերությունը պան Ուլյանիցկու հետ շատ փշացավ...

Որին մեկ որը նա յեզրակացրեց, վոր շատ անհարմար բան ե իր ծառա չունենալը, վորի հետեվանքով ինքը պետք ե ավլի սենյակը։

Դրա համար նա իր մուտ ծառայելու վարձեց Պետրիկ անունով մի տղայի, վորը տանտիրոջ խոհարարուհու վորդին եր։ Խոհարարուհին՝ «պանի» (տիկին)

\* Ֆիքսատուար - անուշահատ քսուք և մազերի ու բեխերի համար։

Ռիմաշեվսկայան, վորին կոչում ելին դոչաղ Լյուբա, մի շատ հաստիկ ու ճղճղան կնիկ եր։ Նրա մասին առհասարակ ասում եյին, վոր դա հրեշ ե և վոչ կնիկարմատ։ Այնինչ նրա վորդին մի հանդարտ տղա յեր, գունատ ու ծաղկատար յերեսով։ Միաժամանակ նա տառապում եր հյուծող տենդով։ Ժատ Ուլյանիցկին, վոր գծուծ մարդու մեկն եր, շատ եժան գնով խոսք կապեց մոր հետ, ու տղան ծառայության մտավ անկյունի սենյակը։

Այս բանը վերջացավ շատ խայտառակ կերպով։ Որին մեկը դոչաղ Լյուբան, ձեռքերը կողքին դրած, բակովը մեկ հարյուսում եր Ուլյանիցկուն և գոռգոռում, վոր նա թույլ չի տա իր «բալիկին» վիրավորեն, վոր, իհարկե, խրատել կարելի յե, բայց վոչ այդպես... «Այ տեսէք, բարի մարդիկ, տղայիս ամբողջ մեջը վո՞նց ե ճղոտել»։ Ու այս ասելով դոչաղ Լյուբան այնպիսի կատաղությամբ վեր քաշեց Պետրիկի շապիկը, վոր նա ցավից ճշաց. հենց իմանաս Լյուբայի ճանկն ընկածն իր տղան չեր, այլ ինքը Ուլյանիցկին։

Վերջինս նստել եր իր սենյակում և խսպառ ականջ չեր դնում գաղագած կնոջ ճվոցին, իսկ հետեյալ առավտոր նորից յերեաց պատուհանում։ Հագնվելու ժամանակ նա մեզ բացատրեց, վոր Պետրիկն անպիտան, անպիտան, անպիտան մի տղա յե։ Նրա մայրն ել մի ստոր կին ե... Յեվ վոր այդ կինը հիմարի մեկն ե, իսկ ինքն Ուլյանիցկին «իր համար կճարի մի ուրիշ, ավելի լավ տղա»։ Նա բարկանում եր, կրկնում եր այս խոսքերն, ու նրա այծի մորուքը գողուժնցվում եր շատ տպավորիչ կերպով։

Շատ չանցած նա ժամանակավորապես գյուղ գնաց, վորտեղ դեռ կենդանի յեր նրա ծերունի հայրը, իսկ յերբ գյուղից վերադարձավ, նրա հետեւց յեկավ մի սայլ՝ ամբողջապես բեռնավորված գյուղական պեսապես մթերքներով։ Սայլի վրա նստած եր 10—11 տարեկան, կարճ կուրտկա հագած, թխադեմ, կլոր աչքերով մի տղա. սա իր աչքերը հառել եր իրեն ան-

ծանոթ իրադրությանը: Այդ որվանկից տղան բնակվեց Ուլյանիցկու սենյակում: Նա հավաքում, մաքրում եր սենյակը, ջուր եր բերում, ամանները ձեռին դնում եր ճաշ բերելու: Սնունը Մամերտ եր կամ փաղաքշական ձեռվ՝ Մամերիկ: Քիչ ժամանակից բակում հայտնի յեղավ, վոր տղան վորբ ե, այն ել ճորտ, վորին չգիտես հայրն եր նվիրել Ուլյանիցկուն, թե ինքն Ուլյանիցկին եր գնել իր համար մի կարգածատիրոջից:

Յես իսպառ չեմ կարող վերհիշել, վոր «տղա գնելու» հնարավորության միտքն ինքնըստինքյան վորևե զիտակցական բողոք կամ զայրույթ հարուցած լիներ իմ մեջ այն ժամանակ: Համենայն դեպս, չնայած դրան, նորեկն այդ հանգամանքի շնորհիվ մեզ համար դառնում եր հետաքրքրական անձնավորություն, վորովհետև մենք շատ տղաներ ելինք տեսնում, բարդ գնված տղա դեռ յերբեք չեյինք տեսել: Ու դրա հետ միասին մի անորոշ զգացմունք այնուամենայնիվ թրպրտում եր իմ հոգում:

Գնված տղայի հետ ծանոթություն հաստատելը դժվար բան եր: Նույնիսկ այն ժամանակ, յերբ պան Ուլյանիցկին պաշտոնի յեր գնում, նրա տղան մնում եր տանը փակված և դուրս եր գալիս միմիայն ամենանհրաժեշտ գործողությունների համար, որինակ՝ աղբը դուրս տանելու, ջուր կրելու, ճաշ բերելու: Յերբ հարմար դեպքում մոտենում ելինք նրան և մկանում ելինք խոսք բաց անել հետը, նա գայլուկի աչքերով նայում եր մեզ, սև կլոր աչքերը վախենալով ցած եր գցում և աշխատում եր շուտով հեռանալ, կարծես թե նրա խոսակցությունը մեզ հետ կարող եր վտանգավոր լինել իր համար:

Սակայն քիչ քիչ մեր փոխադարձ մոտիկությունն սկսվեց: Տղան դադարեց աչքերը գետնին հառելը, կանգ եր առնում, սիրտը կարծես խոսել եր ուզում, կամ թե չե մեր մոտով անցնելիս՝ ժպտում եր. վերջապես մի որ ել, հանդիպելով մեզ տան անկյունի հեռաւմ, նա ցած դրեց ձեռքի կեղտոտ դույլը, ու

մենք սկսեցինք խոսել: Սկսեցինք, իհարկե, այս հարցերից. «անունդ ինչ ե», «քանի՞ տարեկան ես», «վո՞րտեղից ես յեկել» և այլն: Իր հերթին տղան ել հարցրեց մեր անունները և... մի պատառ հաց ուզեց:

Շուտով մենք բարեկամներ դարձանք: Ուլյանիցկին միշտ վերադառնում եր վորոշյալ ժամին, լարված մեքենայի նման: հետևաքար մենք կարող ելինք նույնիսկ նրա սենյակը մանել, առանց յերկյուղ ունենալու, վոր Ուլյանիցկին վրա կհասնի: Միաժամանակ իմացանք, վոր մեր հարևանը ճիշտ վոր դաժան մարդ ե ու շատ ժամատ: Նա Մամերիկին քաղցած է պահում, նրան տալիս ե միայն դաշտակ ամանները լիզելու և հացի կեղելը կրծելու: Ու արդեն յերկու անգամ լավ զմբգել ե նրան բոլորովին գուր տեղը, վորպեսզի Մամերիկն անզործ չստի և չարություն չասի «կախելու արժանի սրիկանների» հետ (հասկանալի յե, վոր Ուլյանիցկու «կախելու արժանինները» մենք ելինք), նա տղային հրամայում եր բարձի համար փետուր քաշել ու հետո այդ փետուրը ծախում եր: Մենք Մամերիկին հաց ելինք բերում ուտելու, և նա մեծ ագահությամբ ուտում եր:

Մամերիկի թե տխուր, սեորակ աչքերի վախկոտ նայվածքը, թե նրա թուխ յերեսի վշտալի արտահայտությունը, թե նրա պատմածները, թե այն ագահությունը, վորով նա ուտում եր մեր բերած ուտելիքները — այս բոլորը մեր մեջ առաջացնում եր մի տեսակ հոգեցունց, խորը համակրանք դեպի գնված տղան և վոխակալության զգացմունք դեպի նրա տերը. և այդ վոխակալությունը մի առավոտ դուրս ժայթքեց:

Խեղճ Մամերիկը մի հանցանք եր գործել, նա զգում եր, վոր անպատճառ ծեծ ե ուտելու պանից, ու այդ միտքը նրան շատ եր տանջում: Մյուս առավոտ, յերբ Ուլյանիցկին յերեաց վարագուրի հետելից, նրա դիմքը զուրկ եր սովորական ինքնագոն փայլից, և մի տեսակ չար արտահայտություն կար յերեսին: նա առանց սերթուկի յեր, ձեռքերը պահել եր հետերը. վարագույրի մոտ կանգ առնելով, կանչեց Մամերիկին

ու հրամայեց ինչ-վոր բան բերել իրեն։ Բայց հենց-վոր տղան յերկշոտ քալերով մոտեցավ, Ուլյանիցկին կատվի արագությամբ բւնեց նրան, կուացրեց շած, գլուխը սեղմեց իր ծնկների մեջ, վայր բաշեց փոխանը, և ոդի մեջ լսվեց ճպոտի շաշյունը։ Մամերիկը հուսահատորեն ճաց և սկսեց թրփտալ։

Մեր ընտանիքում բարքերը մեղմ եյին, և մենք դեռ յերբեք այսպիսի գաժան պատիժ չեյինք տեսել։ Մի ճիչ ել մենք բարձրացրինք պատուհանի տակ, սկսեցինք վոտքերով թփթփացնել ու հայրոյել Ուլյանիցկուն։ Բայց Ուլյանիցկին ել ավելի կատաղությամբ շարունակեց ծեծը։ Նրա դեմքը զզվելի յեր, աչքերը դուրս ընկած, բեխերը բիզ-բիզ կանգնած, իսկ ճիպոտն անդադրում շաչում եր ոդում։

Շատ հավանական ե, վոր մեր ճիչը հիստերիկայի հասցներ մեզ, յեթե տեղի չունենար մի անակնկալ դեպք, Ուլյանիցկու պատուհանի վրա թաղարներով ծաղիկներ եյին շարված։ Նա շատ սիրով խնամում եր նրանց։ Այենից մոտիկ դրված եր նրա սիրած հափրուկը։ Մեր փոքրիկ քուրիկը մի հանկարծական ներշնչմամբ վերցրեց հափրուկը ու թաղարի հետ միասին գետնին զարկեց։ Թաղարը ջարդվեց, ծաղիկն ու հողը գետնով յեղան։ Պան Ուլյանիցկին մի պահ քարացած մնաց, հետո բաց թողեց Մամերիկին ու, մինչեւ մեր ուշքի գալը, զազազած դեմքով յերեաց պատուհանում։ Անմիջապես, մեր քուրիկի ձեռքից բռնած՝ փախանք դեպի մեր դուռը, ուր և նստուեցինք՝ ապահով զգալով մեզ մեր սահմաններում։ Պան Ուլյանիցկին կանգ առավ իր պատուհանից վոչ հեռու, և, ճիպոտը հետևում պահած, սկսեց սնուշ ձայնով կանչել մեզ իր մոտ՝ հաշտության համար կանֆետ խոստանալով։ Բայց նրա խորամանկությունը շատ եր պարզ, ուստի տեղներից ել չշարժվեցինք և բոլորովին անտարբեր կերպով վերաբերվեցինք նրա նենդամիտ մերձեցումներին...

Նույն այդ որը կամ ընդհանրապես այս գեպքից շատ չանցած, մի տոն որ, մորս և մորաքրոջս հետ

փողոցով գնում եյինք. մեզ մոտեցավ պան Ուլյանիցկին։ Ինչպես և միշտ, նա հագնված եր շքեղ կերպով։ Կոշիկները փայլում եյին շլացուցիչ ցոլքով, բեխերի ծայրերը ցցված եյին յերկու մետաղալարի պիս, իսկ սերթուկի կոճկառում աչքի յեր ընկնում մի ծաղիկ։ Նրան վոր տեսա, սիրոս միքիչ թրթաց։ յես հավատացած եյի, վոր մեր արած անկարգության համար նա գանգատվելու յե մորս։ Բայց հակառակ մեր սպասածին՝ վոչ միայն գանգատ չորեց, այլև, մեզանից մեկի կղակից բռնելով, սկսեց կեղծանուշիկ ձայնով գովել մորս առաջ «սիրոնիկ մանսուկներին», վորոնց հետ ինքն ապրում ե շատ մտերմաքար։

Նրա այս անհաջող խաղը նախ՝ մեծ զզվանք հարացեց մեր մեջ, յերկրորդը՝ այնպիսի համոզում տառջ բերեց, վոր Ուլյանիցկին ինչ-ինչ պատճառներով մեր մորից թաքցնում ե տեղի ունեցած ընդհարումը։ Յեկ քանի վոր թաքցընում ե, ապա ուրեմն ինքն իրեն մեղավոր ե համարում։ Այդ կողմից մեզ միանգամայն ապահով համարեցենք ու մեր և Ուլյանիցկու միջն սկսեց պատերազմը։

Մանուկները յերեմն ցուցաբերում են գիտելու մի զարմանալի կարողություն և գիտեն հրաշալի կերպով ել ոգտագործել այդ կարողությունը։ Պան Ուլյանիցկին շատ տարորինակություններ ուներ. նա ժլատ մարդ եր. նա չեր կարողանում տանել, վոր իր սենյակում կամ սեղանի վրա առարկաները տեղից տեղ փոխվելին, և վախ ուներ կտրող զործիքներից։

Մի անգամ, յերբ Ուլյանիցկին ամբողջապես տարված եր սափրվելու գործով և, բռնելով քթի ծայրից, լեզուն դեմ անելով ուոցը եր այն այտը, վոր սափրելու յեր, մեծ յեղբայրս ողանցքի միջով հետ դարձրեց պատուհանի սողնակը, զգուշությամբ սենյակն իջավ ու բաց արեց դուրս յենելու դուռը։ Այս յեղանակով ապահովելով իր նահանջի ճանապարհը, նա սկսեց սենյակի սեղտեղում մի դիվական պար պարել, ցատկուում եր, ծոմավում յերկուտակ

Եր լինում, վոտքերը գլխից վերև դյում ու վայրենի ձախով ճշում եր «հոփ, շլապ, տանանա...»

Պատուհանի տակ կանգնած՝ սարսափով սպասում ենինք, թե ինչ պիտի լինի դրա վերջը։ Բայց վորքան մեծ յեղավ մեր զարմանքը, յերբ տեսանք, վոր չարաքասափիկ ասպետն անշարժ մնում ե տեղում։ Նրա դեմքի և վոչ մի մկանը չդողաց, առաջվա պես զգուշաբար բռնել եր նա քթի ծայրից և սափրում եր բեխերի շուրջը և յեզզով նույնպես ուղցնում եր այտերը։ Տեսնելով, վոր սափրվելու արարողությունը դեռ նոր և սկսված, և Ուլյանիցկին միտք չունի ընդհատել այն, յես փոքր յեղբորս հետ նույնպես մտանք սենյակը և միացանք այդ մոլեզին պարին։ Դա յերեխայական մի խելացնորություն եր. գետին ելին զարկվում աթոռները, կախարանի վրալի հագուստները, մեծ ու փոքր խոզանակները։ Մարսափած Մամերիկը անիմաստորեն դուրս չուած կլորիկ աչքերով դիտում եր այդ սողոմ գոմորը։ Մենակ պան Ուլյանիցկին եր, վոր անձեռոցիկը պարանոցին, ածելին ձեռքում և աչքերը դեպի փոքրիկ հայելին ծուած՝ մնում եր միանգամայն անվրդով։ Յեկ սովորական խնամքով սափրվելն ավարտելուց և ածելին զգուշությամբ պատյանը դնելուց հետո միայն, հանկարծ տեղից թռավ նա գեպի ճիգոտը։ Մեծ յեղբայրս ծկվեց բաց դռնով, իսկ մենք յերկուսս, սարսափած կատվի նման, գեպի պատուհանը վազեցինք։ Յես արդեն պատուհանի գոգումն եյի, յերբ ճիպոտը զզոցով անցավ ականջիս մոտով ու թեթև կերպով սլլաց մեջքիս վրայով։

Այդ ժամանակից սկսած պան Ուլյանիցկին, սափրվելու նստելիս, պատուհաններն ամուր փակում եր, Բայց պատուհանի շրջանակները հնացած եյին, սողնակներն ել տեղերից խախտված։ Յերբ տեսնում եյինք, վոր Ուլյանիցկին արդեն սկսում ե սափրվել, համարձակ մոտենում եյինք պատուհանին, միքիչ հետ եյինք անում ոդանցըր, արանքից տաշեղի ծայրով դարձնում եյինք պատուհանի փականները, Զգիտեմ՝ ինչնիք բացատրել, — հավանորեն այն յերկյուղով, վոր Ուլյանից-

կին տածում եր դեպի կտրող գործիքները, — բայց ածելին ձեռքն առնելուց հետո նա ել չեր կարողանում կիսատ թողնել դժվարին գործը։ Յերբ մենք ավազակային փորձեր եյինք անում, վոր սողոսկենք նրա սրբարանը, նա մեկ աչքով խեթ-խեթ նայում եր մեզ, ու նրա քարացած դեմքին նշմարվում եր նրա հանգստությունը խոռվող մի բարկություն։ Յերբ մեզ հաջողվում եր բաց անել սողնակը, պատուհանն աղմուկով բացվում եր և պառափած ասպետի սենյակում մեր դիվական պարն եր սկսվում։

Մի առավոտ պան Ուլյանիցկին նորից յերեաց պատուհանում և հետո, մոտենալով մեր տան դրանը ու մի տեսակ խորսթափանց հայացք նետելով մեր վրա, սկսեց մեզ հավատացնել, վոր ինքն իսկապես շատ և շատ սիրում ե և՝ մեզ և՝ իր Մամերիկին, վորի համար ուզում ե մուգ-կապտագույն նոր կուրտկա կարել տալ՝ պղնձե ցոլուն կոճակներով, ուստի և խնդրում ե, վոր այդ ուրախ լուրը հայտնենք Մամերիկին, յեթե զիպվածով մի տեղ հանդիպենք նրան։

Բանից դուրս յեկավ, վոր գնված տղան անհետացել ե։ Նույն որը յերեկոյան փոքր յեղբայրս գաղտնաբար դուրս կանչեց ինձ սենյակից ու տարափ ցախատունը։ Այստեղ մութն եր, բայց յեղբայրս համարձակ քայլերով առաջ գնաց. հասնելով կես ճանապարհին, նա կանգ առավ ու սուլեց։ Սկզբում ձայն. ծըպտուն չլսվեց. քիչ հետո անկյունում մի բան շարժվեց, և յերեաց Մամերիկը, Բանից դուրս յեկավ, վոր ցախերի շեղակույտի ու պատի մեջտեղ նա իր համար շինել ե բույնի նման մի բան և արդեն յերկու որ ու գիշեր այնտեղ և ապրում, նա ասում եր՝ «վոչինչ, ապրել կարելի յե», միայն թե սոված ե մնում և սկզբում գիշերները վախեցել ե։ Այժմ արդեն սովորել ե։ Յերբ նրան հաղորդեցինք, թե Ուլյանիցկին նրան սիրում ե և նրա համար կուրտկա յե կարել տալու, նա վճռական յեղանակով պատասխանեց։

Չեմ գնա։ Ավելի լավ ե ջրհորը կընկնեմ, կմեղղվեմ։

Այս ժամանակից սկսած մենք ել ունեցանք մեր գաղտնիքը: Յերեկոներն ուտելու բան ելինք տանում Մամերիկին ու սիասին դուրս եյինք զալիս բակէ աչքից հեռու: անկյուններում զբունելու: Այսպէս շարունակվեց միքանի որ ևս, մինչև վոր մայրս նկատեց մեր խորհրդավոր փսփսոցները: Նա յերկար-բարակ հարց ու փորձ արեց, իմացավ ամեն բան և հետո հորս պատմեց, Յերեխայի վիճակով այժմ հետաքրքվեցին մեծերը: Պան Ուլյանիցկին, ինչ-վոր բացատրություններ տալու համար, կանչվեց «վերև» տանտիրուհի պանի Կոլյանովսկայայի մոտ: Մենք ամենայն զգուշությամբ պահպանում եյինք թաքստոցի գաղտնիքը, վորովհետև խիստ յերդում եյինք կերել այս գաղտնիքը «աշխարհիս յերեսին վոչ մեկին» չհայտնել:

Դրա համար, յերբ «վերևում» Ուլյանիցկու հետ մշակվեցին Մամերիկի անձնատուր լինելու պայմանները, բանակցությունները տեղի եյին ունենում մեր միջոցով:

Վերջապես Մամերիկը վճռեց անձնատուր լինել, իսկ Ուլյանիցկու իշխանությունն ել՝ հասարակական կարծիքի համաձայն՝ սահմանափակվեց: Ամբողջ բակն իմացավ, վոր պանի Կոլյանովսկայան Ուլյանիցկուն սպառնացել ե «դուրս քշել անկյունի սենյակից»:

Բայց քիչ ժամանակից հետո Ուլյանիցկին ինքը հանկարծ հեռացավ ինչ-վոր տեղ: Գնված տղան ընդմիշտ կորավ լայնածավալ անծանոթ աշխարհում, ունիք հետագա վիճակը մեզ անհայտ մնաց:

БІБЛІОТЕКА  
Академії Наук  
УРСР

ՀՀ Ազգային գրադարան



NL0392213

3856.

9165 Цена 35 чпм.  
коп.

8050-785

В. Короленко  
**КУПЛЕННЫЙ МАЛЬЧИК**

ПЕРЕВЕЛ  
на армянский язык  
Я. Н. БОГДАНЯН

---

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
„БОЛЬШЕВИК“  
Ростов-Д., Ворошиловский пр., 27